ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-26-7/1-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 06.05.2026թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից և «ՊԱՐՏԱԴԻՍՏՐԻԲՅՈՒՇՆԱՄ» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն **Կ. Հովսեփյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող», մյուս կողմից, հիմք ընդունելով 16.02.2026թ. կնքված № **ԳՀԱՊՁԲ-26-7/1-1** ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.14 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ «Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմքընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Պայմանագրով նախատեսված ապրանքի գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն № 1 և № 2 հավելվածների:

1.2 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Համաձայնագրի № 1 Հավելվածով նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել Պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ/ այսուհետ Ապրանք/ ՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի , իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ Հավելված № 2-ով նախատեսված ժամանակահատվածում:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 1 869 600 /մեկ միլիոն ութ հարյուր վաթսունինը հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով: Ապրանքի դիմաց վճարումը կիրականացվի 2026 թվականի բյուջետային միջոցների հաշվին, բայց ոչ ուշ քան 25.12.2026թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերեն լեզվով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1,2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն համաձայնագրով նախատեսված ապրանքների ձեռքբերման պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ՕԳՎ ռազմատնտեսական պլանավորման և ապահովման, իսկ կառուցվածքային ստորաբաժանումը՝ ՀՀ ՊՆ թիկունքային ապահովման վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՊԱՐՏԱԴԻՍՏՐԻԲՅՈՒՇՆԱՄ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան,Արաբկիր,Կոմիտասի պ., շ. 2, բն. 9
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Բանկ՝ ՎՏԲ-Հայաստան Բանկ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 16069054514200
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 02319138
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Կ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հավելված N 1
№ ԳՀԱՊՁԲ-26-7/1-1 գնման պայմանագրի
N 1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Չ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Ապրանքների մատակարարումը 2026թ. ընթացքում, ընդ որում՝
						Ապրանքների մատակարարումը կիրականացվի 2026թ. համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում՝ համաձայնագիր կնքելուց հետո 120 օրվա ընթացքում
1	հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /ՎՕ-12/	կգ.	300	5 688	1 706 400	300
6	հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /Առանցքակալային յուղ/	կգ.	100	1 632	163 200	100

Հավելված N 2
№ ԳՀԱՊՁԲ-26-7/1-1 գնման պայմանագրի
N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2026թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 25.12.2026թ., ընդ որում՝		
			2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /ՎՕ-12/	09211660/501	1 706 400	1 706 400	1 706 400
6	հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /Առանցքակալային յուղ/	09211660/503	163 200	163 200	163 200

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«ՊԱՐՏԱԴԻՍՏՐԻԲՅՈՒՇՆԱՄ» ՍՊԸ
Տնօրեն

Դ. ՀՈՎՍԵՓՅԱՆ